ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
(5 հունիսի 1983 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»:

Սիրելի հավատացյալներ, այս խոսքերը գրի է առել և մեզ իբրև թանկագին ժառանգություն թողել մեր հայրենասեր պատմիչ Առաքել Դավրիժեցին: «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ», այսինքն՝ ամբողջ հայ ազգը կապված է և մեկ միություն է կազմում անբաժանելի, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով և Ս. Էջմիածնով: Սա մեր պատմության մեծագույն ճշմարտություններից մեկն է հանդիսանում: Եվ այս ճշմարտությունը մենք այսօր պետք է վերստին հիշենք, որովհետև հենց այսօր, այս կիրակի օրը, մեր Եկեղեցին և մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի տոնախմբում են հիշատակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրության:

Այդ տեղի է ունեցել մեզանից տասնյոթ դար առաջ: Ուրեմն, մոտավորապես հազար յոթ հարյուր տարի առաջ, հիմնվել է այս Մայր տաճարը, Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի օրոք, 303 թվականին, Հայաստանի քրիստոնեացումից անմիջապես հետո: Ինչպես քաջ գիտեք դուք, շնորհիվ Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթքների, ներշնչումների և ջանքերի, պատմական որոշ իրադարձությունների բերումով, 301 թվականին հայ ժողովուրդը ընդունեց

քրիստոնեական նոր հավատքը՝ հրաժարվելով հին նախապաշարումներից: Այդ երանելի օրերին Ս. Գրիգորի ձեռամբ մկրտվեցին հայոց թագավորը, իշխանները և ժողովուրդը համայն: Այդ մկրտությամբ սկիզբ դրվեց Հայաստանյայց Եկեղեցու:

Երկու տարի հետո, 303 թվականին, ավարտվեց կառուցումը այս տաճարի: Եվ այդ օրվանից ի վեր նա մնաց կանգուն, թեև պատմության ընթացքում երբեմն վնասներ կրեց, նույնիսկ որոշ չափով քանդվեց արևելքից արշավող բարբարոս ցեղախմբերի ձեռամբ: Սակայն, երբ փոթորիկը անցավ, հայերը վերակառուցեցին տաճարը, կրկին բարեպարդեցին, և այս կամարների տակ աղոթեցին հազար յոթ հարյուր տարիներ շարունակ: Եվ ավելին. Սուրբ Էջմիածինը և Հայրապետական Աթոռը Ամենայն Հայոց դարձան ոչ միայն կենտրոնը հայոց քրիստոնեական հավատքի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, այլ նաև միավորող ուժը հանդիսացան մեր ամբողջ ազգի, որովհետև շատ անգամ մեր ժողովրդի կավակները քաղաքական դժբախտ պայմանների բերումով հեռացան մայր հայրենիքից և հեռու աշխարհներ գաղթեցին իբրև պանդուխտներ, բայց ուր էլ որ գնացին, հոգով և սրտով կապված մնացին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Ամենայն Հայոց Հայրապետության: Ահա թե ինչու Առաքել Դավրիժեցու այս նշանավոր խոսքը ամբողջապես համապատասխանում է պատմական ճշմարտության, թե հայ ժողովուրդը մեկ ամբողջություն է կազմում Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով և Ս. Էջմիածնով:

Եվ այսօր էլ, սիրելի ժողովուրդ, իրողությունը նույնն է, այսօր էլ մեր ազգը կիսով չափ ապրում է մեր մայր երկրի սահմաններից դուրս: Մեր ժողովրդի ավելի քան մեկ միլիոնն ապրում է հարևան սովետական հանրապետություններում՝ Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Միջին Ասիայի հանրապետություններում: Նաև ավելի քան երկու միլիոն հայեր ապրում են արտասահմանում. Մերձավոր Արևելքում՝ ավելի քան կես միլիոն, Եվրոպայի երկրներից միայն Ֆրանսիայում՝ ավելի քան երեք հարյուր հազար, Հյուսիսային Ամերիկայում՝ մոտ կես միլիոն, իսկ Հարավային Ամերիկայում՝ ջուրջ հարյուր քսան հազար: Եթե այս բոլորը գումարենք, ապա կունենանք երկու միլիոն հայություն, որոնք բնակվում են՝ ցրված աշխարհի ճամփաների վրա: Բայց ամեն տեղ հայերը կառուցել են աղոթքի տներ՝ եկեղեցիներ, կազմել են եկեղեցական համայնքներ և այդ ձևով կապված են մնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նաև մայր հայրենիքին:

Ես բազում անգամներ եղել եմ արտասահմանում և ամեն տեղ նույն բանն եմ հաստատել: Մայիս ամսին ես նորից եղա արտասահմանում, Լոնդոնում՝ Անգլիայի մայրաքաղաքում, և Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում: Այցելություն տվեցի այնտեղ մեր եկեղեցիներին և մեր հավատացյալներին, նրանց համայնքներին: Այցելություն տվեցի նրանց տարբեր կազմակերպություններին, հայկական վարժարաններին և մի անգամ ևս ծանոթացա նրանց կյանքին, նրանց առաջ դրված հարցերին, նրանց դժվարություններին, նրանց նվաճումներին: Մխիթարեցի նրանց, աշխատեցի ոգեշնչել մեր մայր երկրի՝ վերածնված հայրենիքի իրականությամբ, աշխատեցի նրանց ոգևորել և ներշնչել Ս. Էջմիածնի և Հայաստանի եկեղեցական կյանքի առաջադիմությամբ, ձեռք բերված հաջողություններով: Եվ անշուշտ, նրանք ոգևորվեցին և ուրախացան:

Լոնդոնում հայերը ունեն երկու եկեղեցիներ՝ մեկը ավելի մեծ, քան այս տաճարը, որտեղ կարող են տեղ գրավել երկու հազար հոգի: Իմ պատարագին այնտեղ էին հավաքվել ավելի քան երկու հազար հինգ հարյուր հայ հա-

վատացյալներ: Եվ երկրորդը՝ Ս. Սարգիս եկեղեցին, որտեղ նույնպես պատարագ մատուցվեց:

Փարիզում և նրա շրջակայքում բնակվում են հարյուր քսան հազար հայեր: Փարիզում ունենք հինգ-վեց եկեղեցիներ, որտեղ ամեն կիրակի սրբական ծարարողություններ են կատարվում: Կրկնում եմ, թե՛ Լոնդոնում, թե՛ Փարիզում հայերը համախմբված են ապրում՝ միաձուլված Սուրբ Գրիգոր Լուսավորչի հիշատակով և Ս. Էջմիածնի արդի իրականությամբ: Նրանք բոլորը խնդրեցին, որ իմ վերադարձին, այստեղ, Մայր տաճարում քարոզ խոսելիս, ձեզ բոլորիդ, բոլոր հայաստանցի իրենց եղբայրներին և քույրերին բերեմ իրենց սիրո ողջույնները եղբայրական, հայաշունչ ողջույնը և բարի մաղթանքները, որ Աստված միշտ խաղաղ, անվտանգ և անսասան պահի հայոց վերածնված Մայր Հայաստանը, որ Աստված անսասան և միշտ պայծառացյալ պահի-պահպանի Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Այդ պարտականությունը ես սիրով եմ կատարում, բարեպաշտ հավատացյալներ, և վստահ եմ, որ դուք ևս, լսելով իմ այս խոսքերը, իմ այս վկայությունները, հոգեպես մխիթարվում եք, ուրախանում ու մի անգամ ևս ձեր հոգու մեջ գիտակցում, ձեր սրտերի խորքում կգում մեր ժողովրդի հոգևոր ու ազգային միությունը, Ս. Էջմիածնի աստվածային օրհնությամբ ու զորությամբ:

Այս ողջույնի հետ ձեզ բերում եմ նաև իմ օրհնությունը և բարեմաղթությունն ամենքիդ, ձեր քաջառողջության, ձեր գործերի հաջողության և ընտանեկան հարկերի տակ ձեր լիակատար երջանկության համար:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ». ամեն: